DOI: 10.54503/978-9939-9312-4-1-114

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԾԵՐԱՑՄԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՍՏՂԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Շուկայական տնտեսության պայմաններում կարևոր նշանակություն ունեն աշխատանքային ռեսուրսները, որոնք երկրի աշխատուժի և աշխատուժից դուրս բնակչության հանրագումարն են:

Հետազոտության նպատակն է՝ ՀՀ աշխատանքային ռեսուրսների կառուցվածքի վերլուծությունը՝ ժողովրդագրական ծերացման գործընթացի ուսումնասիրության համատեքստում:

Նշված նպատակին հասնելու համար հոդվածում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ✓ վերլուծել աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը,
- ✓ ուսումնասիրել ժողովրդագրական ծերացման գործընթացը,
- ✓ բացահայտել 60 և բարձր տարիքի անձանց տեսակարար կշռի և կյանքի սպասվող միջին տևողության միջև փոխկախվածությունը:

Աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը դա աշխատունակ տարիքի, աշխատունակ տարիքից ցածր և բարձր բնակչության տեսակարար կշիռն է: Մեր երկրում աշխատունակ տարիքի բնակչությանը վերագրվել են 16-62 տարեկան կանայք և տղամարդիկ: Բնակչության տարիքային սահմանները որոշվել են՝ հաշվի առնելով Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) մեթոդաբանական սկզբունքներն ու առաջարկությունները[1]:

Ինչպես գիտենք, աշխատունակ տարիքի վերին սահմանի վրա էական ազդեցություն է թողնում կանանց և տղամարդկանց կյանքի սպասվող միջին տևողությունը:

Կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից-տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը, միջին հաշվով, կապրի, պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մի տարիքից հաջորդին անցնելիս մահացությունը յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին[2]:

ՀՀ 2012-2022 թթ. կանանց և տղամարդկանց կյանքի սպասվող տևողությունը բնութագրող տվյալները ներկայացված են գծապատկեր 1-ում:

---

[1] ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում-2023; էջ 41

[2] ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու-2023; էջ 85



Գծապատկեր 1. ՀՀ կյանքի սպասվող միջին տևողությունը ծննդյան պահից 2012-2023թթ., տարի [3]

Տվյալները փաստում են, որ կանանց կյանքի սպասվող միջին տևողությունը շուրջ 7 տարով գերազանցում է տղամարդկանց կյանքի տևողությանը: Հարկ է նշել, որ կանանց կյանքի սպասվող միջին տևողությունը 2012-2019 թթ. տարեկան միջին հաշվով բարձրացել է 0.3 տարով, իսկ տղամարդկանց առումով էական փոփոխություն չի գրանցվել: 2020-2021 թթ. հատկապես տղամարդկանց մոտ դիտարկվել է կյանքի սպասվող միջին տևողության կրճատում՝ պայմանավորված համավարակով և 44-օրյա պատերազմով:

Աղյուսակ 1-ում ներկայացված է ՀՀ աշխատանքային ռեսուրսների կազմը և կառուցվածքը 2012-2023 թթ. կտրվածքով:

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալները փաստում են, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ամբողջ բնակչության կազմում աշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինը գերակշռում է՝ տատանվելով 62.6-67.9 %-ի սահմաններում, աշխատունակ տարիքից բարձր բնակչության մասնաբաժինը տարբեր տարիներին տատանվել է 12.0-16.1 %-ի սահմաններում:

[3] ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու-2023; էջ 113

Աղյուսակ 1.

ՀՀ աշխատանքային ռեսուրսների կազմի և կառուցվածքի դինամիկան 2012-2023 թթ. [4]

Տարիներ	Ամբողջ բնակչությունը, հազար մարդ	Այդ թվում՝		
		աշխատունակ տարիքից ցածր	աշխատունակ տարիք	աշխատունակ տարիքից բարձր
2012	3021.4	609.1	2050.2	362.1
2013	3026.9	609.8	2051.5	365.6
2014	3017.1	611.8	2034.0	371.3
2015	2998.6	623.7	1987.2	387.7
2016	2998.6	623.7	1987.2	387.7
2017	2986.1	628.8	1962.9	394.4
2018	2972.7	632.9	1934.6	405.2
2019	2965.3	635.7	1910.4	419.2
2020	2959.7	635.6	1889.5	434.6
2021	2963.3	635.5	1881.8	446.0
2022	2961.4	634.7	1868.3	458.4
2023	2977.1	636.1	1862.3	478.7
Տեսակարար կշիռ, %				
2012	100	20.2	67.9	12.0
2013	100	20.1	67.8	12.1
2014	100	20.3	67.4	12.3
2015	100	20.8	66.3	12.9
2016	100	20.8	66.3	12.9
2017	100	21.1	65.7	13.2
2018	100	21.3	65.1	13.6
2019	100	21.4	64.4	14.1
2020	100	21.5	63.8	14.7
2021	100	21.4	63.5	15.1
2022	100	21.4	63.1	15.5
2023	100	21.4	62.6	16.1

[4] ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու -2012- 2023թթ.

ՀՀ-ում 2012-2023 թթ. աշխատունակ տարիքից ցածր բնակչության թվի տեսակարար կշիռը տարեկան միջին հաշվով բարձրացել է 0.5 տոկոսային կետով, աշխատունակ տարիքի բնակչության կշիռը տարեկան միջին հաշվով նվազել է 0.7 տոկոսային կետով, իսկ աշխատունակ տարիքից բարձր բնակչության մասնաբաժինն ավելացել է 2.7 տոկոսային կետով:

Հոդվածի սույն բաժնում ներկայացվել են բնակչության աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը բնութագրող ցուցանիշներ.

- Ժողովրդագրական խնամառության գործակիցը, որը հաշվարկվում է 0-15 տարեկան և 63 ու բարձր տարիքի բնակչության թվաքանակների հանրագումարի հարաբերակցությամբ՝ 16-62 տարեկան բնակչության նկատմամբ, 100 բնակչի հաշվով:
- Երիտասարդների խնամառության գործակիցը՝ 0-15 տարեկանների հարաբերակցությունն է 16-62 տարեկան 100 բնակչի հաշվով:
- Տարեցների խնամառության գործակիցը 63 ու բարձր տարիքի բնակչության հարաբերակցությունն է 16-62 տարեկան 100 բնակչի հաշվով [5]:

Հաշվարկվել է ՀՀ աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը բնութագրող ցուցանիշները 2012-2023 թթ. տվյալներով «տե՛ս գծապատկեր 2»:



Գծապատկեր 2. Աշխատանքային ռեսուրսների կառուցվածքի հիմնական ցուցանիշները, 100 բնակչի հաշվով[6]

Տվյալների վերլուծությունից ակնհայտ է, որ ժողովրդագրական խնամառության գործակցի բարձր մակարդակ գրանցվել է 2023 թ.՝ 16-62 տարեկան 100

[5] ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու-2023; էջ 36

[6] Ցուցանիշները հաշվարկվել են հեղինակի կողմից

բնակչի հաշվով աշխատունակ տարիքից ցածր և բարձր բնակչության թիվը կազմել է 59.9 մարդ, որը 2012 թ. համեմատությամբ բարձրացել է 26 տոկոսով:

Երիտասարդների խնամառության գործակիցը 2012 թ. 100 բնակչի հաշվով կազմել է 29.7 մարդ, 2023 թ.՝ 34.2, այսինքն 16-62 տարեկան 1000 բնակչի հաշվով երիտասարդների թիվը տարեկան ավելացել է շուրջ 5-ով:

Ուշադրության է արժանի, որ ժողովրդագրական խնամառության գործակցի մեջ երիտասարդների գործակիցը ուսումնասիրվող տարիներին գերազանցել է տարեցների խնամառության գործակցին:

Տարեցների խնամառության գործակիցը 2023թ. 100 բնակչի հաշվով կազմել է 25.7 մարդ, որը 2012 թ. համեմատությամբ բարձրացել է շուրջ 46 տոկոսով: Այս ցուցանիշը վկայում է երկրում ինտենսիվորեն ընթացող բնակչության ծերացման գործընթացի մասին:

Այս ամենը հիմք ընդունելով հոդվածում ուսումնասիրվել է նաև բնակչության ծերացման գործընթացները:

Բնակչության ծերացումը կամ ժողովրդագրական ծերացումը տարեցների և ծերերի տեսակարար կշռի ավելացումն է բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ: Հայտնի է, որ բնակչության ծերացումը երակարաժամկետ ժողովրդագրական փոփոխությունների, բնակչության վերարտադրության, ծնելիության, մահացության և դրանց հարաբերակցություններում տեղ գտած տեղաշարժերի, ինչպես նաև մասամբ, միգրացիայի հետևանք է[7]:

Աղյուսակ 2-ում ներկայացված է բնակչության ծերացման գործընթացը գնահատող սանդղակն ըստ լեհ ժողովրդագիր Է. Ռոսեթի:

Աղյուսակ 2.

Ժողովրդագրական ծերացման սանդղակ[8]

Խմբերը	Ծերերի տեսակարար կշիռը (60 և բարձր տարեկան), %	Խմբերի բնութագիրը
I	մինչև 8	Ժողովրդագրական երիտասարդացում
II	8-10	Ծերացման շեմին
III	10-12	Ծերացող
IV	12 և բարձր	Ժողովրդագրական ծերացում

Ըստ ներկայացված սանդղակի ժողովրդագրական ծերացումը սկսվում է, երբ 60 և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը ընդհանուր բնակչության

[7] Մովսիսյան Ա., Հայրիյան Ն.Բնակչության ծերացման վիճակագրական վերլուծությունը ԼՂՀ տվյալներով, ԱԵԳՄՄ-Երևան 2016

[8] Елисеева И.И., Юзбашев М.М. Общая теория статистики: Учебник / Под ред. И.И. Елисеевой.-5-е изд., перераб. И доп.-М.: Финансы и стастистика, 2004.-656 с.: ст 511-513

թվաքանակի մեջ գերազանցում է 12 %-ը, 8-10 %-ի դեպքում բնակչությունը գտնվում է ծերացման շեմին:

ՀՀ 2012-2023 թթ. տվյալներով բնակչության ծերացման գործընթացը ներկայացվել է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3.

ՀՀ բնակչության ծերացման գործընթացը 2012-2023թթ.[9]

Տարիներ	Բնակչության թվաքանակը, հազար մարդ		60 և բարձր տարեկան անձանց տեսակարար կշիռը, %
	ամբողջ բնակչությունը,	60 և բարձր	
2012	3021.4	445.5	14.7
2013	3026.9	455.7	15.1
2014	3017.1	463.2	15.4
2015	2998.6	473.9	15.8
2016	2998.6	486.5	16.2
2017	2986.1	500.6	16.8
2018	2972.7	516.4	17.4
2019	2965.3	536.3	18.1
2020	2959.7	556.1	18.8
2021	2963.3	372.9	12.6
2022	2961.4	585.9	19.8
2023	2977.1	603.2	20.3

Տվյալների ուսումնասիրությունից ելնելով կարող ենք ասել, որ մեր երկրի բնակչությունը դասվում է ժողովրդագրական ծերացող խմբին, քանի որ 60 և բարձր տարեկան անձանց տեսակարար կշիռը ուսումնասիրվող տարիներին գերազանցել է 12 %-ը:

Հոդվածի այս բաժնում ՀՀ բնակչության մեջ տարեցների տեսակարար կշռի և կյանքի սպասվող միջին տևողության միջև փոխկախվածության բացահայտման նպատակով իրականացվել է ռեգրեսիոն-կոռելյացիոն վերլուծություն:

Ուսումնասիրվող երևույթների միջև փոխկախվածությունը ներկայացվել է կոռելյացիոն դաշտի միջոցով «տե՛ս գծապատկեր 3».

[9] ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2012-2023թթ



Գծապատկեր 3. Կյանքի սպասվող միջին տևողության ու 60 և բարձր տարիքի անձանց տեսակարար կշռի միջև փոխկախվածությունը[10]

Վերլուծություն արդյունքները վկայում են, որ ուսումնասիրվող երևույթների միջև կապը ուղիղ է և միջին ուժգնության: Համաձայն ռեգրեսիոն մոդելի՝ կյանքի սպասվող միջին տևողության մեկ տարով երկարացումը հանգեցրել է տարեցների տեսակարար կշռի 0.94%-ով ավելացմանը: Արդյունքային հատկանիշի տատանումների շուրջ 26 %-ը պայմանավորված է կյանքի սպասվող միջին տևողության տատանումներով, իսկ մնացած 74 տոկոսը այլ և պատահական գործոնների ազդեցությունն է:

Հոդվածում իրականացված վերլուծությունների հիման վրա կատարվել են հետևյալ եզրակացությունները.

- ✓ ՀՀ-ում ժողովրդագրական խնամառության գործակցի բարձր մակարդակ գրանցվել է 2023 թ.՝ 16-62 տարեկան 100 բնակչի հաշվով աշխատունակ տարիքից ցածր և բարձր բնակչության թիվը կազմել է 59.9 մարդ, որը 2012 թ. համեմատությամբ բարձրացել է 26 տոկոսով,
- ✓ ժողովրդագրական խնամառության գործակցի մեջ երիտասարդների խնամառության գործակիցը ուսումնասիրվող տարիներին գերազանցել է տարեցների խնամառության գործակցին,
- ✓ տարեցների խնամառության գործակիցը 2023 թ. 2012 թ. համեմատությամբ բարձրացել է շուրջ 46 տոկոսով: Այս ցուցանիշը վկայում է երկրում ինտենսիվորեն ընթացող բնակչության ծերացման գործընթացի մասին,

[10] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից

✓ կյանքի սպասվող միջին տևողության մեկ տարով երկարացումը հանգեցրել է տարեցների տեսակարար կշռի 0.94%-ով ավելացմանը:

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԾԵՐԱՑՄԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՍՏՂԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Համառոտագիր: Հայտնի է, որ ժողովրդագրական փոփոխությունները՝ բնակչության թվաքանակի կրճատումը և ծերացումը, իրենց բացասական ազդեցությունն են թողնում աշխատանքի շուկայի վրա՝ պայմանավորված տարեցների մասնաբաժնի ավելացմամբ և երիտասարդների տեսակարար կշռի կրճատմամբ: Պաշտոնական վիճակագրական տվյալները վկայում են, որ ՀՀ-ում 2012-2023 թթ. բնակչության թվաքանակը տարեկան միջին հաշվով նվազել է 4.0 հազար մարդով կամ 0.13 տոկոսով: Ուսումնասիրվող ժամանակահատվածում ամբողջ բնակչության կազմում աշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինը գերակշռում է՝ տատանվելով 62.6-67.9%-ի սահմաններում, աշխատունակ տարիքից բարձր բնակչության մասնաբաժինը տարբեր տարիներին տատանվել է 12.0-16.1%-ի սահմաններում: Ժողովրդագրական խնամառության գործակցի մեջ երիտասարդների գործակիցը գերազանցել է տարեցների խնամառության գործակցին: Այսպիսով, վերլուծությունները վկայում են, որ մեր երկրի բնակչությունը համարվում է ծերացող, քանի որ 60 և բարձր տարեկան անձանց տեսակարար կշիռը ուսումնասիրվող տարիներին գերազանցել է 12 տոկոսը:

Բանալի բառեր-աշխատանքային ռեսուրսներ, Ժողովրդագրական խնամառության գործակից, բնակչության ծերացում:

STATISTICAL ANALYSIS OF THE LABOR FORCE COMPOSITION AND AGING PROCESS OF RA POPULATION

ASTGHIK MOVSISYAN

Abstract. It is known that population decline and population aging significantly affect demographic changes. Population decline and demographic aging have negative impact on the labor market due to the increasethe share of elderly people and a decrease the share of youth. Official statistics shows that in the RA in 2012-2023 the population decreased by 4.0 thousand people or 0.13 percent annually. During the study period, the share of the working-age population prevailed in the total population, fluctuating within 62.6-67.9%, the share of the population older than the working age in different years fluctuated within 12.0-16.1%. Among the demographic indicators providing care, the share of youth exceeded the share of elderly people. Thus, the analyzes prove that the population of our country is considered aging, since the share of people aged 60 and older in the years studied exceeded by 12 percent.

Keywords: labour resources, demographic dependency ratio, population aging

СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ СТРУКТУРЫ ТРУДОВЫХ РЕСУРСОВ И ПРОЦЕССА СТАРЕНИЯ НАСЕЛЕНИЯ РА

АСТХИК МОВСИСЯН

Аннотация. Известно, что убыль населения и старение населения существенно влияют на демографические изменения. Убыль населения и демографическое старение оказывают негативное влияние на рынок труда за счет увеличения доли пожилых людей и уменьшения доли молодежи. Официальная статистика показывает, что в РА в 2012-2023 годах численность населения ежегодно сокращалась на 4,0 тыс. человек или на 0,13 процента. В исследуемый период в общей численности населения преобладала доля трудоспособного населения, колеблясь в пределах 62,6-67,9%, доля населения старше трудоспособного возраста в разные годы колебалась в пределах 12,0-16,1%. Среди демографических показателей, обеспечивающих уход, доля молодежи превышала долю пожилых людей. Таким образом, проведенные анализы доказывают, что население нашей страны считается стареющим, так как доля лиц в возрасте 60 лет и старше в исследуемые годы превышала ее на 12 процентов.

Ключевые слова-*трудовые ресурсы, коэффициент демографической нагрузки, старения населения*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում-2023; էջ 41
2. ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու-2023; էջ 85
3. ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու -2014; էջ 48, 2016; էջ 45, 2019; էջ 45; 2023; էջ 46
4. **Մովսիսյան Ա., Հայրիյան Ն.,** Բնակչության ծերացման վիճակագրական վերլուծությունը ԼՂՀ տվյալներով, ԱԵԳՄՄ-Երևան 2016, էջ 279)
5. **Елисеева И.И., Юзбашев М.М.** Общая теория статистики: Учебник / Под ред. И.И. Елисеевой.-5-е изд., перераб. И доп.-М.: Финансы и стастистика, 2004.-656 с.: ст 511-513
6. www.armstat.am